

Շնորհավորանք Հայրենական պատերազմի մասնակից Շուշանիկ Գրիգորյանին՝ ծննդյան 95 ամյակի կապակցությամբ

21.12.2013



Աշտարակ քաղաքի բնակիչ Շուշանիկ Գրիգորյանին շատերն են ճանաչում: Նա Հայրենական պատերազմի մասնակից է, ունի հասարակական, մանկավարժական գործունեության հարուստ կենսագրություն:

Դեկտեմբերի 21-ին լրացավ նրա ծննդյան 95 ամյակը: Այդ կապակցությամբ Արագածոտնի մարզպետ Սարգիս Սահակյանը, փոխմարզպետ Նունե Մովսիսյանի, ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության Աշտարակի բաժանմունքի պետ, փոխգնդապետ Հովիկ Գրիգորյանի, Աշտարակի վետերանների միության նախագահ Լեւոն Մարգարյանի ուղեկցությամբ այցելեց հոբելյարի տուն: Շնորհավորանքի խոսքերն ու ջերմ մաղթանքները ծավալվեցին տոնական սեղանի շուրջ:

Մարզպետն իր խոսքում նշեց, որ այս այցելությունը վկայությունն է այն բանի, որ Շուշանիկ Գրիգորյանի բովանդակալից կյանքը գնահատվում ու արժեւորվում է ղեկավարության կողմից: Իր կենսագրությամբ նա այժմ էլ ուսանելի դասեր է տալիս սերունդներին:

Շնորհակալ լինելով այցելության եւ բարեմաղթանքների համար, հարուստ կենսափորձ ունեցող հոբելյարը հետաքրքիր դեպքեր ու հիշողություններ պատմեց: Իր մտքերն ու գաղափարները նա ամբողջացրեց տարբեր տարիներին գրած բանաստեղծությունների ընթերցմամբ: Դրանցով նա կոչ ու հորդոր է հաղորդում իր հարազատներին ու մտերիմներին, հայրենակիցներին ու ողջ ժողովրդին՝ լինել ազնիվ, աշխատասեր, սիրել բարին ու մերժել չարիքը: Իսկ ամենից առաջնայինը նրա մաղթանքներում խաղաղությունն է, հանուն որի նա ինքը՝ քսանամյա աղջնակը, ժամանակին մարտնչել է թշնամու դեմ, եւ հանուն ինչի նա միասնականության ու լավատեսության կոչ է անում նաեւ այսօրվա սերնդին: